Հարգելի գործընկերներ,

Սիրով ողջունում եմ պերինատալ բժշկության արդիական հիմնախնդիրներին նվիրված միջազգային գիտաժողովի մասնակիցներին:

Հերթական այս գիտաժողովի թիրախը՝ մայրական և մանկական առողջության բարելավումը, համահունչ է Հայաստանի Հանրապետության կառավարության գերակա խնդիրներին:

Պետք է ասել, որ ամբողջ աշխարհում մայրական և մանկական մահացության ցուցանիշները որոշակիորեն արտացոլում են տվյալ երկրի սոցիալ-տնտեսական նկարագիրը:

Փաստենք, որ Հայաստանում մանկական և մայրական մահացության ցուցանիշներն էականորեն նվազել են: Սա խոսում է այն մասին, որ նույնիսկ ֆինանսական սուղ միջոցներով կարելի է արդյունավետ կառավարման և նվիրվածության շնորհիվ հասնել բարձր ցուցանիշների:

Օգտվելով առիթից՝ նայելով ձեր աչքերին, ցանկանում եմ ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնել այս կարևոր գործում ներդրում ունեցող բոլոր նվիրյալներին՝ թե՛ դահլիճում գտնվող մասնագետներին, թե՛ նրանց, ովքեր այս պահին վիրահատարաններում ու ծնարաններում են:

Հարգելի գործընկերներ, անկախ մեր ունեցած դրական արդյունքներից, դեռևս մեծ անելիքներ ունենք Կայուն զարգացման նպատակներին հասնելու, մասնավորապես՝ մայրական և մանկական մահացության ցուցանիշներն ավելի նվազեցնելու և եվրոպական արդյունքներին հասցնելու ուղղությամբ:

Տեղյակ եմ, որ այս գիտաժողովում ներկայացվելու են աշխարհի նորագույն մոտեցումներն ու միջազգային փորձը մանկաբարձական հեմոստազիոլոգիայի ոլորտում: Նաև կքննարկվեն հղիության հետ կապված հեմոստազի ծանր խանգարումները:

Լիահույս եմ, որ Ֆրանսիայից, Իսրայելից, Ռուսաստանից ժամանած, մեծ համբավ ունեցող կլինիցիստ-գիտնականների մասնակցությունը կնպաստի Հայաստանում այս ծառայության բարելավմանը, մատուցողների՝ մանկաբարձ-գինեկոլոգների, մոր ու պտղի բժշկությամբ զբաղվող մասնագետների գիտելիքների և հմտությունների կատարելագործմանը:

Մաղթում եմ ձեզ արդյունավետ աշխատանք, բարձր տրամադրություն և մասնագիտական հետագա հաջողություններ: